րու տպաւորութիւններ կը մատնեն իրենց ներկայութիւնը հոն. ազատութեան սէրէն զատ, նաեւ ահաւոր յոռետեսութիւն մը, նիւթապաշտներէն եկած արհամարհանք մը հանդէպ հոգեկանութեան, «ես»ի արժէքին, այսինքն մարդկային արժանապատուութեան գաղափարին, մարդկային ծնունդին: Կեանքը, բարութիւնը, հոգեկան արժէքները ատող Ֆրանցը՝ արտայայտութիւն մըն է ուրիշ կողմէ Շիլլէրի այդ մտայնութեան, ինչպէս ազատութեան սէրը կարոլոսով: Ֆրանցի մէջ մարդկային ծնունդին սրբազնութիւնը, որ վերածուած է տուիփի եւ վախճանը՝ հողացումի, ժխտումն է բարոյախօսութեան, եւ արդիւնք՝ գաղափարային այն ահաւոր պայքարին, որ իմաստասիրական բախումը ունեցաւ Շիլլէրի մէջ եւ իր օրերու գրականութենէն ներս:

Եթէ Շիլլէր չի հաւատար հոգեբանական փոփոխութեան մը, որով չարագործ մը կրնայ դառնալ եւ գրկել բարութիւնը, կորսուած խղճի մը նախկին երջանկութիւնը, Հիւկոյ զայն կարելի ըրած է Էոնանի-ի լուծման մէջ, երբ նոյնիսկ ոչ մէկ տրամադրութիւն կար դէպի այդ յանկարծական յեղաշրջումը: Ոճրագործ աւազակապետ մը եւ վատօրէն մեղկ ու արկածախնդիր թագաւոր մը կը դադրին դիրար առելէ: Անբնական է այս վերջը, բայց զայն կարելի ըրած է միայն բանաստեղծին կամքը, ուղելով հոգեկան վսեմութիւն մը անճնաւորել կայսեր գաղափարին մէջ:

Արդ, երբ կը վերադառնանք քննելու Վարդ եւ Շուշանը իր փոքրկութեան մէջ եւ մանաւանդ իր լուծումը, որ այնքան բնական ու համակրելի է, 15 տարեկան տղու մը երեւակայութեան պտուղ, իր ողջմտութեամբ, հաւասարակշռութեամբ, զուսպ պարզութեամբ, մեր օտարամոլ ունայնամտութիւնը բախումի կը հանդիպի անշուշտ: Իմաստութիւնը՝ չափերու եւ պարագաներու նկատառումի մէջն է. Շիլլէրի ուժը, խիզախ շեշտը եւ ընդլայնելու առատագեղ յորդութիւնը չունի, հասկնալի պատճառներով մեր փոքրիկ Դուրեանը, բայց շնորհաղուրկ մ'ալ չէ թատրոնի կառոյցքը անտեսող, բեմական կարողութենէն տնանկ, ինչպէս ոմանք ուզեցին խորհիլ, հեռու առարկայական ըլլալու տրամադրութենէ:

Սիրոյ կեանքէն Դուրեան պիտի անցնի ընկերային եւ դասակարգային (իշխանական-ժողովրդական) հարցեր շօշափելու, զանոնք գործածելու իբր պատմական ենթահող իր յաջորդ գործերուն մէջ. ընկերայինին հետ պիտի շօշափէ նաեւ ազգային-կրթական նպատակներ: Ժամանակին պահանջն էր մշակումը նման նիւթերու, նոյնիսկ երբ իրապաշտ հոսանքը սկսաւ իրմով մտնել մեր գրական ասպարէզը:

ԴԱՆՏԷԻ «ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ»Ը

(Շար. Բազբաւէպ, թ. 4, էջ 444-456)

ԴՐԱԽՏ. ԵՐԳ ԺԹ.

Երանելի հոգիներից կազմուած Աշխարհը (արդարութեան խորհրդանիշը) խօսում է աստուածային արդարութեան անքննելիութեան եւ հաւատն ու գործերը զուգորդելու անհրաժեշտութեան մասին. ապա դատափետում է քրիստոնեայ թագաւորների յոռի արարքները:

Իմ առջեւն էր, թեւերը լայն բացած արդ,
Պատկերն արծուի, որ կազմուած էր յիշեալ
Հոգւոց հոյլից երանելի ու զուարթ:

4 Ամէն մէկը կարմիր յակինթ էր թըւում,
Որտեղ ասես ցոլքն էր ընկած արեւի,
Եւ այդ ցոլքը իմ աչքերին էր զարնում:

7 Եւ այն, ինչ ես այժմ ուզում եմ պատկերել,
Ոչ մարդու միտքն է յղացել երբեւէ,
Ոչ ձայնն ասել, ոչ էլ թանաքն է գրել:

10 Ես տեսայ եւ լսեցի իսկ թէ ի՛նչպէս
Արծուի կըտուցն արտաբերեց «ես» եւ «իմ»,
Թէեւ մտքում «մենք» եւ «մեր» էր իրապէս:

13 «Արդարութեանս ու գըթութեանըս համար, —
Սկսեց խօսել, — ես բարձրացայ այս փառքին,
Որին հասնել լոկ ցանկութեամբ չէ հընար:

© National Library of Armenia

16 Երկրում թողի ես այնպիսի յիշատակ,
Որ չարերն իսկ գովաբանում են այնտեղ,
Բայց ինձանից չեն վերցնում օրինակ»:

19 Ինչպէս վառուած շատ քանակի ածուխից
Դուրս է գալիս մի ջերմութիւն սոսկական,
Այսպէս մի ձայն էր դուրս գալիս այն արծուից:

22 Ես ասացի· «Ով հոգիներ վեհաշուք,
Որ մշտաշող ձեր ցնծութիւնը ծաղկուն
Մի ձայնով էք արտայայտում միայն դուք,

25 Ցագեցրէք արդ իմ քաղցը անկշտում,
Որից այնքան տառապեցի ես երկար,
Չըգտնելով ոչ մի սնունդ աշխարհում:

28 Գիտեմ, եթէ արքայութեան մէջ համայն
Ցոլանում է արդարութիւնն Աստուծոյ,
Ապա ձեր մէջ էլ կ'երեւայ որոշ այն:

31 Դուք գիտէք, որ ես պատրաստ եմ լսել ձեզ·
Դուք գիտէք, որ մի տարակոյս կայ իմ մէջ,
Որի լուծման կարիք ունեմ վաղուց ես»:

34 Ինչպէս բազէն, երբ գլխանոցն են հանում,
Իր թեւերն է թափահարում խայտանքից,
Ցոյց տալով որ սաւառնել է ցանկանում,

37 Այսպէս խայտաց այն արծիւը երկնային,
Կազմաւորուած հոգիներից խնկարկու,
Եւ երգեց երգ, որ անյայտ էր աշխարհին:

40 Ապա ասաց՝ «Նա, ո՛վ գրծեց կարկինով
Շրջանակը տիեզերքի եւ այնտեղ
Լցրեց բազում յայտ ու անյայտ բաներով,

43 Կարողացաւ իր միտքն այնտեղ դրոշմել
Այնպէս խորունկ, որ նա գլեց ու անցաւ
Այն ամէնից, ինչ որ ինքն էր ստեղծել:

46 Դրա փաստը այն գոռոզն է առաջին,
Որ, գերազանց թէեւ ամէն էակից,
Գահավիժեց, զի չսպասեց իր անին:

49 Նրանից ցած էակները բոլոր այլ
Փոքր անօթ են ընդունելու այն Բարին,
Որ ունի վերջ ու սահման մի որոշեալ:

42 Արդ ձեր միտքը — որ համարեայ թէ միայն
Մի նշոյլն է աստուածային այն Մտքի,
Որով լի են արարածներն ամենայն —

55 Անկարող է լինել այնքան զօրաւոր,
Որ գիտակից, թէ նախաւորը վեր է
Իրեն հասու սահմաններից հունաւոր:

58 Եւ լինելով սահմանափակ մտովի,
Դուք տեսնում էք Արդարութիւնը յաւերժ,
Ինչպէս աչքն է տեսնում անհունը ծովի:

61 Նա սոսկ ափին ընդրա յատակն է տեսնում,
Իսկ բաց ծովում այլեւս չի տեսնում այն,
Զի ալուցքը այնտեղ շատ է խորանում:

64 Լոյս է լոկ այն, որ բխում է ցաւերժից,
Իսկ մընացած ամենայն ինչ խաւար է,
Մարմնի մընթարք կամ մարմնի թոյն ժանտալից:

67 Հիմա արդէն քեզ պարզ եղաւ բաւական
Խորհուրդը խոր արդարութեան կենդանի,
Որի մասին խորհում էիր դու այնքան:

70 Դու կ'ասէիր· «Հնդկաստանում մարդ չկայ,
Որ Քրիստոսի մասին խօսի ու լրսի
Եւ կամ նրա մասին գրի ու կարդայ·

73 Բայց նա ամբողջ իր խոհերով ու կամքով
Միշտ եղել է բարեբարոյ եւ կեանքում
Զի մեղանչել ո՛չ իր գործքով, ո՛չ խօսքով:

© National Library of Armenia

76 Նա անկընունք եւ անհաւատ է մեռնում.
Արդա՞ր բան է դատապարտելը ընբան.
Մի՞թէ մեղք է, եթէ նա չի հաւատում»:

79 Արդ ո՞վ ես դու, որ դատաւոր ես դառնում
Եւ դատում ես հազար մղոն հեռուից,
Երբ քո աչքը թիզից այն կողմ չի տեսնում:

82 Անշուշտ ինձ պէս մտածողը խոր ու նուրբ,
Տարակոյսի շատ պատճառներ կ'ունենար,
Եթէ ընբան չ'առաջնորդեր Գիրքը Սուրբ:

85 Ո՛վ երկրային անբաններ, ով՛ մտքեր բութ,
Աստծու կամքը, որ բարի է ըստ ինքեան,
Չի շեղուի իր նպատակից բարեգութ:

88 Արդարն այն է, որ ընբան է կամակցում.
Նա չի դնում էակների մէջ խըտիր,
Որովհետեւ ինքն է ընբանց ստեղծում»:

91 Ինչպէս ճայը, ձագուկներին սընելով,
Բոյնի վրայ պտըտւում է ու ճախրում,
Ձագն էլ ընբան հետեւում է աչքերով,

94 Այսպէս ճախրեց այն արծիւը սրբազան,
Ընբան կազմող հոգիներից խթանուած,
Այսպէս աչքով հետեւեցի ես նրան:

97 Նա ճախրելով բարբառում էր մեծագոչ.
«Ինչպէս մութ են իմ խօսքերը քեզ համար,
Այսպէս մութ են դատաստանները Տիրոջ»:

100 Երբ կանգ առան հոգիները յոգնաթիւ,
Միշտ պահելով կերպարանքը այն արծուի,
Որ Հռոմին բերեց յարգանք ու պատիւ,

103 Նա բարբառեց նորից. «Վայրն այս երկրալից
Ձելաւ նա, ով չընհաւատաց Քրիստոսին՝
Առաջ եւ կամ յետոյ ընբա մահուանից:

106 Սակայն շատեր, որ դիմում են Քրիստոսին,
Վերջում ընբան ընդուզ մօտիկ կը լինեն,
Քան ընբանք՝ որ չեն ճանաչել Քրիստոսին:

109 Հաբէշն անգամ կ'արհամարհի այդ մարդկանց,
Երբ որ նրանք երկու մասի կը ջոկուեն,
Մի մասն յաւէտ դարձած հարուստ, միւսն աղքատ:

112 Պարսիկները ձեր արքայից ի՞նչ կ'ասեն,
Երբ բաց տեսնեն այն մատեանը, որի մէջ
Ընբանց բոլոր վատ գործերը գրուած են:

115 Անդ կ'երեւայ Ալբերտի գործն իրական
— Եւ գրիչն էլ կ'արձանագրի դա շուտով —
Թէ ի՛նչպէս է կործանուելու Պըրագան:

118 Անդ կ'երեւայ անձկութիւնը Փարիզի,
Երբ կեղծ դրամ կը հատի նա, ով յետոյ
Զոհ կը գնայ խեթկումներից վարազի:

121 Անդ կ'երեւայ տիրութեան տենչը անյագ
Անգլիացու եւ Սկովտիացու խելագար,
Որ չընկեցան սահմանների մէջ ներփակ:

124 Դուք կը տեսնէք կենցաղը մեղկ ու պագշոտ
Իսպանացու եւ այն բոհեմ արքայի,
Որ լաւ վարք ու բարքին մընաց անծանօթ:

127 Դուք կը տեսնէք նշանակուած I տառով
Լաւ գործերը կաղոտանի արքայի,
Իսկ վատերը՝ նշանակուած M տառով:

130 Դուք կը տեսնէք ագահութիւնն անպատկառ
Այն մարդու, որ տէրն է կղզուն հըրաբորբ,
Ուր Անքիսը աւարտեց կեանքն իր երկար:

133 Եւ ցոյց տալու համար՝ ինչքան է նա վատ,
Ընբա մասին յապաւներով կը գրուի,
Որ քիչ տեղում նշանակուեն մեղքերը շատ:

© National Library of Armenia

136 Եւ կ'երեւան արարքները վշտածին
Նըրա եղբօր ու հօրեղբօր, որ իրենց
Ազնիւ զարմն ու զոյգ թագերը պղծեցին:

139 Եւ կ'երեւան գործերը պիղծ ու տխեղծ
Պորտուգալցու, Նորվեգցու եւ այն Սերբի,
Որ Վենետկի արծաթ դրրամը կեղծեց:

142 Օ՛, երջանիկ է Հունգարիան, եթէ էլ
Զըկեղեբուի: Երջանիկ է Նաւարրան,
Եթէ լեռով կարողանայ պաշտպանուել:

145 Բայց իբրեւ վատ նախանշան այս բանի,
Դեռ հեծում են Ֆամակոստան, Նիկոսիան
Կրունկի տակ իրենց վայրի գազանի,

148 Որ միւսներին ամէն ինչով է նըման»:

ԴՐԱԽՏ ԺԹ· ԵՐԳ (Ծանօթ·)

115–141· *Այս եռատողերում կայ դանտէական արուեստի մի հնարանք: Առաջին երեք եռատողերը (տտ· 115–123) սկսում են* Li (Անդ)· *յաջորդ երեք եռատողերը (տտ· 124–132) սկսում են* Vedrassi (Դուբ կը տեսնէէ)· *հետեւեալ երեք եռատողերը (տտ· 133–141) սկսում են* E (Եւ): *Երեք խմբի եռատողերի առաջին տողերի սկզբնատառերը կազմում են աքրոստիկոս* LVE *կամ* LUE (*հնում* V *եւ* U *տառերը գրւում էին նոյն ձեւով*), *որ նշանակում է «ժանտախտ»: Ուզում է ասել, որ վատ թագաւորները, ինչպիսիք են այս ինը եռատողերում ներկայացուած անձինք, ժանտախտ են երկրի համար:*

ԴՐԱԽՏ· ԵՐԳ Ի·

Երեւում են Արծուի աչքը կազմող վեց հոգիները (Դաւիթ, Տրայիանոս, Եզեկիա, Կոնստանդին, Գուլիէլմ եւ Ռիֆէոս), որոնց մէջ կան երկու հեթանոսներ (Տրայիանոս եւ Ռիֆէոս)· որպէսզի Դանտէն չզարմանայ թէ ի՛նչպէս են այդ երկուսը գտնուում այդ տեղ, Արծիւը բացատրում է թէ նրանք փրկուել են եւ խօսում է Նախասահմանութեան խորհուրդի անքննելիութեան մասին:

Երբ աշխարհը լուսաւորող լուսատուն
Մայր է մտնում հորիզոնից մեր երկրի,
Եւ ամէնուր լոյսն է դառնում նըւազուն,

4 Երկինքը, որ նրանով էր լոկ շողում,
Պսպղում է յանկարծ բազում աստղերով,
Որոնց մէջ լոկ միակ մի լոյս է ցոլում:

7 Ես յիշեցի այս վիճակը երկնքի,
Երբոր լըռեց օրհնեալ կըտուցը նըրա,
Որ դրօշն է կայսրութեան եւ կայսրերի·

10 Չի հոգիներն այն լուսազարդ ու զըւարթ՝
Էլ աւելի պայծառացած՝ սկըսեցին
Երգել երգեր, որոնք ես չեմ յիշում արդ:

13 Օ՛, քաղցը սէր, ուրախութեամբ ջերմացած,
Ի՜նչքան էիր վառւում նըրանց խմբերգում,
Որ միայն սուրբ խոհերից էր ներշնչուած:

16 Երբ հոգիներն այն թանկագին ու շէնշող,
Որոնցով էր լցուած գունդը վեցերորդ,
Դադարեցրին իրենց համերգն առինքնող,

19 Ես լսեցի կարկաչն, ասես, գետակի,
Որ հոսում է ժայռերն ի վար մաքրաջինջ,
Ցուցադրելով առատութիւնն իր ակի:

22 Եւ ինչպէս որ տաւիղը ձայն է հանում
Բռնատեղից, եւ կամ ինչպէս սըրընգի
Ծակտիքներից շունչը նըւագ է դառնում,

25 Այսպէս առանց յապաղելու՝ կարկաչն այն
Վեր բարձրացաւ պարանոցով արծիւի,
Եւ այնտեղ էլ անմիջապէս դարձաւ ձայն:

28 Ապա ձայնն այն խօսքի ձեւով դուրս եկաւ
Իր կտուցից, ինչպէս սիրտն էր ուզում իմ,
Ուր խօսքերն այն դրոշմեցի ես անձկաւ:

31 «Իմ այն մասը, որ տեսնում է, — խօսեց նա, —
Եւ անքըթիթ տոկում տեսքին արեւի,
Հարկ է որ դու դարձնես դէտի առարկայ,

© National Library of Armenia

34 Իմ պատկերը կազմող բոլոր լոյսերից
Ընդանիք, որոնք կազմում են աչքն իմ շողուն,
Արժանագոյնն են մընացած բոլորից:

37 Այն որ բիրի նըման շողում է մէջտեղ,
Սրբազնագոյն Հոգու երգիչը եղաւ,
Որ փոխադրեց տապանակը տեղից տեղ:

40 Արդ նա գիտէ արժանիքը իր երգի,
Ըստ որում դա արդիւնք էր իր ներշնչման,
Որ ստացաւ ի տրիտուր իր ձիրքի:

43 Յոնիքս աղեղը կազմող այն հինգ հոգուց
Նա, ով մօտ է իմ կըտուցին, այն անձն է,
Որ սփոփեց այրուն՝ զրկուած իր որդուց:

46 Արդ նա գիտէ, թէ ի՛նչքան է նստում թանկ
Քրիստոսին չըհետեւելն, երբ փորձով
Ճանաչում է քաղցրը կեանքն ու դառը կեանք:

49 Յաջորդը, որ յոնք-աղեղիս մէջ այս կոր
Գըրաւում է քիչ աւելի բարձր տեղ,
Յապաղեցրեց մահն իր զղջման աղօթքով:

52 Արդ նա գիտէ, որ դատաստանն երկնաւոր
Չի փոփոխուի, թէեւ երբեմն աղօթքով
Վաղուան ձգուի կատարուելիքը այսօր:

55 Միւսը պապին տալու համար Հռոմը մեծ,
Լոկ լաւ մտքով, թէեւ արդիւնքն եղաւ վատ,
Օրէնքներն ու ինձ Բիւզանդիոն փոխադրեց:

58 Արդ նա գիտէ, թէ ի՛նչպէս իր լաւ մտքից
Առաջ եկած չարիքն իրեն վատ չեղաւ,
Թէեւ աշխարհն անչափ տուժեց դըրանից:

61 Իսկ նա, որին յոնքիս ներքեւ ես տեսնում,
Գուլիէլմոն է, ում ողբում է երկիրն այն,
Որին Կարլոսն ու Ֆեդերիկն են լացնում:

64 Արդ նա գիտէ, ինչպէս երկինքը արդար
Սէր է տածում հանդէպ արդար արքային,
Եւ դա ցոյց է տալիս տեսքով իր փարփառ:

67 Ով կը կարծէր ձեր աշխարհում մոլորեալ,
Թէ տրոյացի Ռիփէոսը կը լինէր
Հինգերորդը այս լոյսերից սրբափայլ:

70 Արդ նա գիտէ շնորհի մասին երկնային
Շատ աւելի, քան որ գիտեն աշխարհում,
Թէեւ ամէն ինչ չիմանայ հիմնովին»:

73 Արտոյտն ի՛նչպէս, որ օդի մէջ բարձրացած,
Նախ դայլայլում եւ ապա լուռ է մընում,
Իր վերջացրած գեղգեղանքից գոհացած,

76 Այսպէս լըռեց ու գոհ թըւաց պատկերն այն
Արդարութեան, որի համար ամէն ինչ
Կատարւում է վերին կամքի համաձայն:

79 Թէեւ կասկածս երեւում էր յայտնապէս,
Այնպէս ինչպէս գոյնը միջով ապակու,
Բայց այլեւս չէի կարող լըռել ես,

82 Եւ հարցըրի դրդուած ներքին մըղումից·
«Այդ երկուսը ի՞նչպէս է որ փրկուել են»:
Միւս հոգիներն ուրախացան իմ հարցից:

85 Արծիւն օրհնեալ իր աչքերը աւելի
Շողացնելով պատասխանեց ինձ յայնժամ,
Որ չմնամ զարմանքի մէջ տանջալի·

88 «Տեսնում եմ, որ հաւատում ես եղածին,
Բայց չըգիտես թէ դա ի՛նչպէս է եղել·
Հաւատում ես, բայց հասու չես դիպուածին:

91 Քո վարմունքով դու նըման ես այն մարդուն,
Որ լաւ գիտէ լոկ անունը իրերի,
Բայց չըգիտէ էութիւնը նըրանց բուն:

© National Library of Armenia

94 *Արքայութիւնն երկնից* ձեռք են միշտ բերում
Բուռը սիրոյ եւ վառ յոյսի զօրութեամբ,
Որոնք Աստծու կամէութեանն են յաղթում.

97 Բայց ոչ ի՛նչպէս մարդը մարդուն՝ բռնութեամբ,
Այլ յաղթում են, զի նա ուզում է յաղթուել.
Եւ յաղթուած՝ նա յաղթում է բարութեամբ:

100 Այն երկու լոյս հոգիները իմ յօնքի
Մեծ զարմանք են քեզ պատճառում, ըստ որում
Տեսար նրանց գրգարանում երկնքի:

103 Նրանք մարմնից ելան իբրեւ քրիստոնեայ,
Ոչ հեթանոս, հաւատալով հաւաստի
Քրիստոսի չարչարանքին բազմօրեայ:

106 Մէկը կեանքի կոչուեց խորից Դրժոխքի
(Որտեղ չըկայ դէպի բարին վերադարձ)
Լոկ շնորհիւ վառ յոյսի ու աղօթքի,

109 Այն վառ յոյսի ու աղօթքի առ Աստուած,
Որով միայն նա կարող էր փրկուել
Եւ կատարել դէպի բարին շրջադարձ:

112 Խօսքիս նիւթը եղող հոգին փառապանծ,
Կարճ ժամանակ միանալով իր մարմնին,
Հաւատաց նրան, ո՛վ փրկել է շատ մարդկանց:

115 Եւ հաւատն այդ սիրով այնպէս ջերմացաւ,
Որ երբ որ նա երկրորդ անգամ վախճանուեց,
Արժանացաւ գալու Դրախտն այս անցաւ:

118 Իսկ միւս հոգին, մի երկնային շնորհքով,
Որ բխում է այնպիսի խոր Ակունքից,
Որ նրկատել անհնարին է աչքով,

121 Զգտեց միայն արդարութեան, ուղղութեան,
Եւ Աստուած էլ, իբրեւ շնորհ յաւելեալ,
Պարգեց նրան խորհուրդը մեր փրկութեան:

124 Նա հաւատաց եւ այդ պահից ըսկսեալ
Զբիանդուրժեց պիղծ հաւատը հեթանոս
Ու կշտամբեց մարդկանց բարքերը եղծեալ:

127 Երբք կանայք, որ տեսար մօտն անուի աջ,
Ծառայեցին նրան իբրեւ մի կընունք,
Կընունքից դեռ հազարամեակ մի առաջ:

130 Ո՛վ երկնային խորհուրդ, որքան է հեռու
Քո արմատը աչքերից, որ չեն տեսնում
Ամէն ինչի նախապատճառն հոգարկու:

133 Մահկանացու մարդիկ, ըզգոյշ դատեցէք,
Վասնզի մենք, որ տեսնում ենք Աստուծուն,
Դեռ ամենայն ընտրեալներին չըգիտենք:

136 Մենք գոհ ենք մեր այս գիտութեամբ անկատար.
Մեր բարիքն է լոկ կամենալ այն, ինչ որ
Կամենում է Աստուծոյ կամքը արդար»:

139 Այսպէս պատկերն արդարութեան արծուենի
Բաց անելու համար միտքն իմ կարնատես,
Ինձ դաս տրուեց հանելի ու պիտանի:

142 Եւ ի՛նչպէս որ տաւղահարը սխրալի
Իր նրւագով ձայնակցում է լաւ երգչին,
Եւ դրրանով երգը դարձնում դիւրալի,

145 Այսպէս երկու լոյս–հոգիները օրհնեալ
Բոցկլտալով ու շողալով միասին,
Ինչպէս մէկտեղ թարթող աչքեր հրափայլ,

148 Ընկերակցում էին արծուի խօսքերին:

37–72. *Այս հատուածներում եւս կայ դանտէական արուեստի մի եղանակ: Արդարութեան արծուի աչքը կազմող վեց հոգիներից իւրաքանչիւրին յատկացուած է մի հատուած, որին յաջորդող հատուածը սկսում է Արդ նա գիտէ (Ora conosce): Վեց հոգիներն էլ արդար են եւ լուսաւորուած. բայց միայն այժմ, Դրախտում, նրանք ճանաչում են իսկական արդարութիւնը:*

© National Library of Armenia